

զքառասուն հազար տուն ի Մտամագոլ, Դալաթա և Սկուտարդ: Թանգի յօթաեածխան ձէլալիքն աւիրել էին, և ամենեաքեան հալածեալք և փախուցեալք անդ էին հանգուցեալք: Եւ թէ հաշուես ի Պուգտանայ մինչև Մտամագոլ, պութուն Ռուումէլին մինչև մեծն Վանատիկ, նա չկայ քաղաք, զեղ կամ չֆոլիկ, որ հայ չկհնայ: — Աւզեգրաւթիւն, էջ 8:

Մուրատ փաշտ, իր զօպիչ արշաւոնքէն երբ յաղթական կը վերագառնայ, քիչ ետք թագաւորէն հրաման կը հանէ որ պահպօտատները իրենց տեղերը վերագառնան. շատեր առաջն զանազան միջոցներով կը մնան է. Պոլիս և Թրակիա (Դարանազցի, էջ 145-7): Բայց եօթ հազար հոգիէ աւելի բազմութիւն մը, Հայ և Տաճիկ, ստիպուած կը վերադառնան իրենց նախկին բնակովայրեր (Դարանազցի, էջ 148):

Ճամբուն վրայ կը տեսնեն որ ջալալիներու մեացրտներէն Մուրթատ անուն զօրագլուխ մը վրան զարկած է Հաճի - Հաճզաըսուած տեղը, բայց տուն վերագարձող դաղթականներու կարաւանին չարիք մը չ'ըներ: — Դարանազցի, էջ 149:

Ջալալիներու յարուցած խռովութիւնները յատկապէս վատժարացուցին Երուսաղէմի միաբանութեան վիճակը: Արովհետեւ անոնք «վրդովեցին զերկիրն ամենայն, և եղեն հայ ազգս խեղճ և ողորմելի, և յերուսաղէմ հարկատուութիւնէն ոչ հարաց բառնալ, և եղին զամենայն խաչ և աւետարան և եկեղեցին զրաւ ի քոյլ տաճեկաց, և էր պարտքն իշիթ [= 27000] զրչ»: — Պոլարիան, Ցուցակ 2եռ. Երուսաղէմի, Գ, էջ 194:

«Ճէլալիներու վախը տիրապետած էր ամէնքին. Սուրբ Աթոռի միաբաններէն ոչ ոք չէր համարձակեր նուիրահաւաքութեան համար Բերիայէն անդին անցնիլ. գաղրած էր նաև ուխտաւորներու երթեւեկը» Երուսաղէմ: — Սաւալանեանց, Պատմ. Երուսաղէմի, էջ 564:

Այդ տագնապալի և վտանգաւոր չըջանին Նախախնամութիւնը տնօրինած էր որ Ա. Յակոբեանց վանքը ունենայ իր անձնուէր վարիչը յանձին Պարոնտէր Գրիգոր պատրիարքի:

Ն. ԵՊԱ. ԾՈՎԱԿԱՆ

ԵՐԵՍՈՒԽ ՏԱՐԻ ԱԹԱԶ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԵ
ԲԱՌԵՐՈՒ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Կարողիկոս և կարողիկէ յունարէն բառ մըն է, բարօլիկօն, բարօլիկի՛, որ բարգուած է բարա՛ (պես, ըստ) և օ՛լոս (հանուր, ամբողջ, ամենալի) ածականէն, և կը նշանակէ բնինաներական:

Կարողիկէ բառը Նիկիական հանգանակով նուիրագործուած է իրեր ստորոգիի քրիստոնէտական Եկեղեցւոյն: «Հաւատամք և ի մի միայն ընդհանրական (= կարողիկէ) Եկեղեցիո: Այսինքն, առանց յարանուանութեան, Յիսուս Քրիստոսի մի եկեղեցին, որ ընդհանրական է և կը պատկանի բոլոր ազգերու հաւատացեալներու ամբողջութեան, այսինքն՝ չի պատկանիր միայն հայուն կամ հոսոմին կամ լատինին՝ զատզատ: Եւ իրօք այսպիսի ազգայնական և յարանուանական տառնձին ըմբռնութեար և հասկացողութիւններ չկային քրիստոնէտական աշխարհի մէջ, Քաղկեդոնի Ժողովէն (451) առաջ, և եկեղեցի ըսուած ատեն կը հասկցուէր Քրիստոսի Եկեղեցին, որ մեկ է, ընդհանրական (կաթողիկէ) է, առանձինական է և սուրբ է:

Գալով կարողիկոս բառին, չատ հին է ատոր գործածութիւնն ալ Հայոց մէջ, Յահնայապետի և Եպիսկոպոսապետի իմաստով, նոյնպէս վրաց և Աղուանից Եկեղեցաց մէջ:

Ասորի Եկեղեցւոյն ալ հովուապետը կը կոչուի Կարողիկօ (cathoulico), այսպէս որ բառը թէն օտար, բայց ուրիշ շատ մը բառներու պէս, Հայացած է բոլորապին և նուիրագործուած է Հայ պատմութեան և Հայց Եկեղեցւոյն մէջ:

Լուսաւորչէն սկսեալ իր բոլոր սերունդին եպիսկոպոսապետները մինչև Ս. Սահակ, Կարողիկոս անունը վատաւորած են, ատոր տալով սրբազն պաշտօնին բարձր իմաստը, նուիրական ըմբռնուամը և արժանիքի ու գերքի վսիմ հասկացողութիւնը: (Սիոն, 1928 Յունիս, էջ 183-184):